Funded by UK Government

unicef
յուրաքանչյուր երեխայի համար

UNDP

Ընտանեկան բռնության հոգեբանական հետևանքները տարբեր տարիքի երեխաների համար[1]

0-1 տարեկան

ՄԱՆԿԻԿՈՒԹՅԱՆ ՎԱՂ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆ

1-3 տարեկան

Զարգացման հիմնական առանձնահատկություններ	Ընտանեկան բռնության հետևանքով դրսևորվող առանձնահատկություններ
Աշխարհի մասին տեղեկության հավաքում զգայարանների միջոցով	Բարձր ձայները և բռնության հետ կապված տարատեսակ բացասական տեսարանները կարող են անհանգստացնող լինել երեխայի համար
Ապահով կոնտակների կառուցում՝ մասնավորապես ծնողների հետ	Ընտանեկան բռնության հետևանքով ծնողները հաճախ չեն կարող կայուն ձևով արձագանքել իրենց երեխայի կարիքներին, ինչը բացասաբար է ազդում ծնող-երեխա կապի վրա
Աշխարհի ակտիվ ճանաչում	Վախն ու անկայունությունը կարող են խանգարել աշխարհը ճանաչելուն, իսկ երեխայի վարքի մեջ կարող են լինել դրսևորումներ, որոնք ագրեսիայի դրսևորումների ականատես լինելու հետևանք են
Ընտանիքում առկա հարաբերությունները դիտելով և լսելով՝ սոցիալական կապերի և հարաբերությունների ճանաչում	Երեխան սովորում է ընտանիքում ագրեսիայի դրսևորումներին՝ առկա հարաբերությունների դիտումների միջոցով

[1] Ավելի մանրամասն կարող ես տեսնել հետևյալ աղբյուրներում՝ DOMESTIC VIOLENCE AND ITS IMPACT ON CHILDREN'S DEVELOPMENT (edited version of a presentation delivered at the Department of Community Services' Fourth Domestic Violence Forum held at the NSW Parenting Centre, Old Bidura House Ballroom, Glebe, on 24 September 2002), IMPACT OF DOMESTIC ABUSE ON CHILDREN BY DEVELOPMENTAL LEVEL (CAADA FAMILY INTERVENTION PROJECTS' (FIPS') TRAINING PROGRAMME, 2009).

Այս նյութը ստեղծվել է Միացյալ Թագավորության կառավարության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում Մանկական և կրթության հոգեբանների հայկական ասոցացիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Միացյալ Թագավորության կառավարության կամ ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները:

AACEP
Armenian Association of Child and Educational Psychologists

Funded by UK Government

unicef
յուրաքանչյուր երեխայի համար

UNDP

3-6 տարեկան

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔ

Զարգացման հիմնական առանձնահատկություններ	Ընտանեկան բռնության հետևանքով դրսևորվող առանձնահատկություններ
Սովորում է ճանաչել, արտահայտել հույզերը՝ այդ թվում ագրեսիան և զայրույթը, ընդունելի ճանապարհով	Սովորում է ագրեսիայի և զայրույթի անառողջ արտահայտման ձևերը և/կամ դրանց նկատմամբ ձեռք բերում հանդուրժողականություն, ինչին նպաստում է նաև հիմնականում իրար հակասող տեղեկություն ստանալը, օրինակ՝ «ինչ եմ ես տեսնում»-ը հակասում է «ինչ են ինձ ասում»-ին
Էգոցենտրիկ մտածողության ձևավորում	Կարող է վերագրել ընտանիքում առկա բռնության դրսևորումներն իր կատարած գործողություններին, օրինակ, «եթե ես խելոք մնայի, պապան չէր հարվածի մամային»:
Դերասյուժետային խաղի զարգացում	Երեխայի խաղում կարող են նկատվել ականատես եղած ագրեսիայի դրսևորումներ, օրինակ, խաղի ընթացքում կարող է հարվածել իր տիկնիկին:
Հասարակության կողմից տրվող տեղեկատվությամբ դրվում են գենդերային դերերի նույնացման նախադրյալները	Գենդերային դերերի մասին ինֆորմացիան ասոցացվում է զոհականացման և/կամ բռնության հետ
Ֆիզիկական սեպարացիայի՝ առանձնացման մեծացում, ինքնախնամքին միտված գործողությունների ավելացում	Ընտանիքի անառողջ հարաբերությունների արդյունքում դրսևորվող անկայունությունը կարող է խաթարել ֆիզիկական առանձնացմանը, երեխան կարող է ունենալ ռեգրեսիվ վարքի դրսևորումներ

Այս նյութը ստեղծվել է Միացյալ Թագավորության կառավարության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում Մանկական և կրթության հոգեբանների հայկական ասոցացիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Միացյալ Թագավորության կառավարության կամ ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները:

AACEP
Armenian Association of Child and Educational Psychologists

Funded by UK Government

unicef
յուրաքանչյուր երեխայի համար

UNDP

6-11 տարեկան

ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔ

Զարգացման հիմնական առանձնահատկություններ	Ընտանեկան բռնության հետևանքով դրսևորվող առանձնահատկություններ
Ինքն իր և այլոց հուզական ռեակցիաների, իրազեկվածության բարձրացում	Հատկապես բռնության նկատմամբ սեփական ռեակցիաների մասին բարձր իրազեկվածություն, ինչը տարածվում է նաև այլոց վրա բռնության ազդեցության հնարավոր հետևանքներին, օրինակ, մայրիկի բարեկեցության, անվտանգության մասին անհանգստություն, հայրիկի հնարավոր ձերբակալման մասին անհանգստություն
Մտածողության զարգացման որակական նոր հենքի վրա ձևավորվում են ճշտի-սխալի, արդարի-անարդարի պատկերացումները	Առավել հակված է ընդունելու բռնության վերաբերյալ ռացիոնալիզացիաները (ալկոհոլի չարաշահումն է բռնության պատճառը, բռնության ենթարկվող մարդն է պատասխանատու կատարվածի համար):
Կրթական և սոցիալական հաջողությունները դպրոցում դրական ազդեցություն են ունենում ինքնաճանաչման վրա	Սովորելու գործընթացը կարող է տուժել բռնության պատճառով, երեխան կարող է ընտրողական լինել դրական հետադարձ կապերի նկատմամբ:
Իր սեռի հետ նույնականացման մեծացում	Երեխան կարող է նույնականցնել իր սեռի մեծահասակի գենդերային դերերը անառողջ հարաբերությունների տեսանկյունից, օրինակ, տղամարդը բռնություն կիրառողն է, իսկ կինը՝ ենթարկվողը:

Այս նյութը ստեղծվել է Միացյալ Թագավորության կառավարության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում Մանկական և կրթության հոգեբանների հայկական ասոցացիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Միացյալ Թագավորության կառավարության կամ ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները:

AACEP
Armenian Association of Child and Educational Psychologists